



**Nederlands Armeens Comité voor  
Rechtvaardigheid en Democratie  
(Hay Tad)**

Adres: postbus 16303, 2500 BH Den Haag  
Website: [www.haytad.nl](http://www.haytad.nl), E-mail: [info@haytad.nl](mailto:info@haytad.nl)

## ԿՈՉ

### Միբելի հայրենակիցներ՝,

Հոլանդիայի Հայ Դատի հանձնախումբը կոչ է անում ձեզ մասնակցելու Հայոց Մեծ Ցեղասպանության 95-րդ տարելիցի կապակցությամբ կազմակերպված միջոցառումներին: Տարիներ շարունակ մենք մեր բողոքի ձայնն ենք քարձրացնում Թուրքիայի կառավարության ժխտողական քաղաքականության և միջազգային հասարակայնության անտարբերության դեմ: Այս տարի նույնպես բողոքի և հիշատակի միջոցառումներ ենք կազմակերպել՝ համագործակցությամբ մի քանի այլ կազմակերպությունների:

### Ապրիլի 23-ին ժամը 20:30-ին

**Het Plein , Den Haag**

տեղի կունենա **ջահերով կամ մոմերով երթ** դեպի Թուրքիայի դեսպանատուն՝ Հաագայում: **ՀՅԴ** Նիդեռլանդների **«Գարեգին Նժդեհ»** երիտասարդական միության հետ համատեղ մոմեր կվառենք անմեղ գոհերի հիշատակը հավերժացնելու համար: Մեր բոլոր հայրենակիցներին և հատկապես երիտասարդներին կոչ ենք անում ներկա գտնվելու չափազանց կարևոր այս հավաքին, որտեղ մեր բողոքի հզոր ձայնը կհնչեցնենք ի լուր աշխարհի:

### Ապրիլի 20-ին ժամը 12:30-ից սկսյալ

**Het Plein , Den Haag**

կսկսվի մեր հանրահավաքը Հոլանդիայի խորհրդարանի առջև: Ցույցը կազմակերպել են **Հոլանդիայի Հայ Դատի հանձնախումբը** և Հոլանդիայի Հայկական Կազմակերպությունների **Ֆեդերացիայի «Ապրիլ 24» հանձնախումբը** համատեղ՝ **«Հոլանդիայի համագործակցող Հայկական կազմակերպություններ»** անվան տակ: Այս ցույցի միջոցով կրկին անգամ կարտահայտենք մեր զայրույթը Թուրքիայի խարդավանքների և մերժողական քաղաքականության դեմ, ինչպես նաև Արևմուտքի անտարբերության և անարդարության դեմ: Կոչ ենք ուղղում Հոլանդիայում գործող բոլոր հայկական կազմակերպություններին և Հոլանդիայում

բնակվող բոլոր հայազգի հայրենակիցներին ակտիվորեն մասնակցել այս ցույցին:  
Հանրահավաքը տեղի կունենա **երեքշաբթի**՝ 2010 թվականի **ապրիլի 20**-ին, ժամը՝  
**12:30**-ին:

## **Ապրիլի 24-ին ժամը 16:00-ին** **Armeense kerk , Almelo**

Կսկսվի **Ալմելոյի Հայ Առաքելական Եկեղեցու վարչության** և **Ալմելոյի Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միության** հետ համատեղ կազմակերպած հիշատակի արարողությունը հոգեհանգստյան **Սուրբ պատարագով**, որից հետո **ծաղկեպսակներ** կտրվեն Հայոց Մեծ Ցեղասպանության անմեղ զոհերի հուշարձանին: **Հուշ-երեկոն** նվիրված բազմամիլիոն հայ նահատակների հիշատակին, որին մասնակցում են Հոլանդիայի խորհրդարանի պատգամավորներ, Ալմելոյի քաղաքական խորհրդի բոլոր կուսակցությունների ներկայացուցիչները, գիտության և արվեստի գործիչներ, կսկսվի ժամը **18:30**-ին:

Hay Tad Nederland  
[www.haytad.nl](http://www.haytad.nl)